ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ՝ ՁԵՌՆԱՐԿ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ոստիկանության արձագանքն ընտանեկան բռնությանը՝ ձեռնարկ ոստիկանության ծառայողների համար

Կանանց աջակցման կենտրոն

Եվրոպայի խորհրդի ազգային խորհրդատու

Խմբագիր Լուիս Հուփեր

Եվրոպայի խորհրդի միջազգային խորհրդատու

Ձեռնարկը մշակվել է ՀՀ Ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում:

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:
Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլ նամակները պետք է հասցեագրվեն Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գենդերային հավասարության բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ gender.equality@coe.int).

Կազմը և էջադրումը.
Task LLC

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր 2024 թվական

Բովանդակություն

Ներածություն 4
Սահմանումները և ընտանեկան բռնության տեսակները 4
Ընտանեկան բռնությունը հասկանալը. ուժի և վերահսկողության շրջափուլը 6
Ո՞վքեր են բռնություն գործադրող անձինք 7
Ո՞վքեր են զոհերը 8
Ընտանեկան բռնության տեսակները 8
Ընտանեկան բռնության ազդեցությունը 12
Հետևանքները զոհերի վրա 12
Հետևանքները երեխաների վրա 13
Ոստիկանության արձագանքը 15
Ոստիկանության կարևոր ռազմավարությունները 15
Ոստիկանության ծառայողների համար քայլ առ քայլ ուղեցույց 17
Արձագանքող խումբ ուղարկելը 17
Դեպքի վայր ժամանելիս նախնական արձագանքը 18
Ժամանելուց անմիջապես հետո 19
Ապացույցներ հավաքագրելը 20
Բռնություն գործադրող անձին նույնականացնելը 21
Զոհակենտրոն մոտեցում որդեգրելը 22
Ռիսկերի գնահատում իրականացնելը 23
Ընտանեկան բռնության մասին օրենքի շրջանակներում ոստիկանության հնարավոր գործողությունները 26
Նախազգուշացումը 26
Անհետաձգելի միջամտության որոշումը (ԱՄՈ) 27
Լրացուցիչ նկատառումներ 30
Կարևոր գործոններ, որոնք պետք է հաշվի առնել 30
Ինչ անել, երբ զոհը հերքում է բռնության փաստը 31
Ընտանեկան բռնության զոհերի աջակցման կենտրոնները 32
Հղումներ 35

Ներածություն

Ոստիկանության ծառայողները շատ կարևոր դերակատարություն ունեն՝ որպես առաջնագծում գտնվող առաջնային արձագանքի ծառայողներ: Նրանք հաճախ առաջինն են առնչվում ընտանեկան բռնության զոհերի հետ և պատասխանատու են հանցանքի վայրում և դրանից հետո անհապաղ անվտանգություն ապահովելու համար: Ոստիկանության արդյունավետ արձագանքը և հետաքննությունը վստահություն են ստեղծում զոհի մոտ, ինչն իր հերթին ավելի հավանական է դարձնում հետապնդման հաջող ընթացքը:

Սույն հակիրճ ձեռնարկի նպատակն է օգնել դեպքի վայր ժամանած ոստիկանության ծառայողներին արդյունավետորեն արձագանքելու ընտանեկան բռնությանը՝ հատկապես կենտրոնանալով Հայաստանում ընտանեկան բռնության վերաբերյալ վերջին օրենսդրական թարմացումների վրա: Այնուամենայնիվ, սույն ձեռնարկը ոչ թե նախատեսված է փոխարինելու ֆորմալ ուսուցումը կամ հանդես գալու որպես հետաքննության և հետապնդման համար համապարփակ ուղեցույց, այլ՝ առավելապես ոլորտի ծառայողների համար որպես լրացուցիչ աղբյուր լինելու համար:

Սահմանումները և ընտանեկան բռնության տեսակները

Ընտանեկան բռնությունը ներառում է բռնացող վարքագծի, այդ թվում՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական և սեռական բռնության տարբեր ձևերը: Այն կարող է գործադրվել նաև առցանց և տեխնոլոգիաների միջոցով: Թեև ընտանեկան բռնությունը կարող է տեղի ունենալ յուրաքանչյուրի հետ, այնուամենայնիվ, այն անհամաչափորեն ավելի շատ է կիրառվում կանանց, քան տղամարդկանց նկատմամբ: Ինչպես բացատրվում է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, որը նաև

հայտնի է որպես Ստամբուլի կոնվենցիա, կանանց նկատմամբ բռնությունը հիմնված է կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար ուժային հարաբերությունների վրա, որոնք հանգեցնում են գերիշխանության ու խտրականության՝ կանխելով կանանց իրավունքների լիարժեք առաջխաղացումը: Հետևաբար, կանանց և տղամարդկանց միջև հավասարության հասնելը կարևոր է կանանց նկատմամբ բռնությունը կանխելու համար: Անչափ կարևոր է հասկանալ, որ ընտանեկան բռնությունը հնարավոր չէ արմատախիլ անել, քանի դեռ բռնություն գործադրող անձինք իրենց գործողությունների համար պատասխանատվություն չկրեն: Սրա համար անհրաժեշտ է ոստիկանության արդյունավետ և ջանասիրաբար կատարվող աշխատանքը, որը հանգեցնում է համաչափ և տարհամոզիչ պատասխանատվության միջոցների կիրառմանը:

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը, ներառում են առցանց սեռական ոտնձգությունը, առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումը և հոգեբանական բռնության թվային հարթությունները, ինչպես օրինակ՝ կիբեռբուլինգը, ինտիմ պատկերների տարածումը, վրեժխնդրության նպատակով պոռնոգրաֆիան, առցանց սպառնալիքի, ահաբեկման, ամոթանքի և զրպարտության ցանկացած ձև: Տնտեսական բռնությունը գործադրվում է նաև առցանց՝ կնոջ տնտեսական ռեսուրսները վերահսկելու կամ վնասելու միջոցով, ինչպիսիք են նրա բանկային հաշիվը, նրա անունով վարկ ստանալու համար դիմելը կամ այլ կերպ նրա հեղինակությանը վնասելը (Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ, ԳՐԵՎԻՈ, Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին թիվ 1 ընդհանուր առաջարկություն):

Ընտանեկան բռնությունը հասկանալը. ուժի և վերահսկողության շրջափուլը

Ընտանեկան բռնությունը գործադրվում է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընտանեկան բռնությունը գործադրվում է իրավախախտների կողմից, որոնք իրենց զոհերի նկատմամբ կիրառում են ուժի և վերահսկողության տարբեր ձևեր՝ հաճախ հասցնելով այն շրջադարձային կետին, երբ տեղի է ունենում բռնությունը:

Դրանք կարող են ներառել **ահաբեկումը, էմոցիոնալ բռնությունը, մեկուսացումը, զոհի անձի թերագնահատումը, բռնության մերժումը, զոհին մեղադրելը, վերահսկողություն հաստատելու նպատակով երեխաներին օգտագործելը, հասարակության մեջ իրենց կարգավիճակին և դիրքին ապավինելը, ընտանեկան բյուջեի նկատմամբ վերահսկողությունը և զոհի նկատմամբ հարկադրանք ու սպառնալիք կիրառելը:**

Բռնության այս ձևերից մի քանիսը դժվար է նույնականացնել, և բռնություն գործադրող անձի կողմից **հարկադիր վերահսկողության** ներքո գտնվող զոհը կարող է չափազանց վախեցած լինել, որպեսզի կամավոր կերպով տեղեկություններ տրամադրի ոստիկանությանը և կարող է հերքել տեղի ունեցած իրադարձությունները կամ հետ վերցնել իր հայտարարությունը:

Միջադեպից հետո բռնություն գործադրող անձը կարող է ներողություն խնդրել և ներում հայցել, և կյանքը կարող է որոշ ժամանակով կարգավորվել: Այնուամենայնիվ, լարվածությունը

շուտով նորից սկսում է մեծանալ, և բռնության շրջափուլը կրկնվում է: Ժամանակի ընթացքում այդ միջադեպերը կարող են սրվել՝ հանգեցնելով ծանր ֆիզիկական և էմոցիոնալ վնասվածքների կամ նույնիսկ մահվան:

Այս դինամիկան հասկանալն առանցքային է ընտանեկան բռնության արդյունավետ կանխարգելման, պաշտպանության և հետապնդման համար:

Ո՞վքեր են բռնություն գործադրող անձինք

Ընտանիքի անդամները կարող են լինել մի շարք մարդիկ՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), ծնողը (նաև խորթ ծնողը, որդեգրողը, խնամատար ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն), երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրողի ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետ):

Զուգընկեր կամ նախկին զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:

Ո՞վքեր են զոհերը

Ֆիզիկական անձ՝ ցանկացած անձ, այդ թվում՝ բռնությանն ականատես երեխա, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանեկան բռնությունից («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետ):

Խնամքի տակ գտնվող անձ՝ երեխա, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ, առողջական կամ այլ հանգամանքներով անօգնական վիճակում գտնվող անձ, որը բնակվում է ընտանեկան բռնության ենթարկված անձի հետ, և որի համար մշտապես հոգ է տանում վերջինս («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետ):

Ընտանեկան բռնության տեսակները

Ֆիզիկական բռնություն՝ անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավը, վնասվածքը կամ վնաս պատճառելը, ինչպես նաև առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, անտեսումը, մարդուն առևանգելը և ծայրահեղ դեպքերում սպանությունը («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային

բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետ):

Սեռական բռնություն՝ անձի կամքին հակառակ սեռական բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետ):

Հոգեբանական բռնություն՝ անձին հոգեբանական ճնշում կամ հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ սպառնալիքով ճնշում գործադրելը, վախ հարուցող վարքագիծ կիրառելը, անձի ինքնագնահատականի և արժանապատվության նվաստացումը, կամ հոգեբանական անհանգստություն և վնաս պատճառելը, անձի ինքնագնահատականը ցածրացնելը, մեկուսացնելը, վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, անձի մեջ իր կամ հարազատի անվտանգության համար վախ հարուցելը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանությանը հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետ):

Տնտեսական բռնություն՝ զոհի հիմնական կարիքները՝ սնունդը, կացարանը, բժշկական օգնությունը կամ ֆինանսական ռեսուրսները բռնարարի կողմից վերահսկելը, նրան ֆինանսական կախվածության մեջ դնելը՝ գոյության համար անհրաժեշտ

միջոցներից՝ սննդից, հագուստից, կացարանից, դեղից և հիգիենայի պարագաներից զրկելու միջոցով, նպաստի կամ կենսաթոշակի, այդ թվում՝ աշխատավարձի չափը կեղծելը, անձի գույքը վնասելը կամ բռնագրավելը, գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, նրան ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետ):

Հետամտում՝ ներկա կամ նախկին զուգընկերոջ կամ ամուսնու կողմից անձի նկատմամբ ոտնձգություն կատարելը, անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով նրան հետևելը, նրա կամքին հակառակ նրա հետ հաղորդակցվելու փորձ կատարելը, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելը: Այդ արարքը համարվում է հանցագործություն, եթե կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ ստիպել է էապես փոխել իր կենսակերպը: Հետամտումը պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հինսապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ երկու հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով (Քրեական օրենսգիրք, 196.1 հոդված):

Անտեսում՝ երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները՝ սնունդը, հագուստը, կացարանը, բժշկական օգնությունը և սպասարկումը, կրթությունը, իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր

ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչ տիրապետում են պատշաճ հնարավորություն-ների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխար-գելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետ):

Ընտանեկան բռնության ազդեցությունը

Հետևանքները զոհերի վրա

Վերահսկողություն հաստատելու նպատակով ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրող զուգընկերոջ նկատմամբ մշտական վախի մեջ ապրելը զոհին պատճառում է խոր տրավմա:

Տրավմայի ազդեցությունը	Վախի ազդեցությունը
Տրավման կարող է ժամանակավորապես վնասել գլխուղեղի բաժինները, ինչը կարող է տեսանելի հետևանքներ ունենալ շփումների ժամանակ: Զոհերը կարող են խնդիրներ ունենալ կենտրոնացման հետ, դառնալ մոռացկոտ (մոռանալ նույնիսկ այնպիսի հասարակ մանրամասներ, ինչպիսիք են իրենց երեխաների տարիքը), դժվարանալ հաջորդականությամբ հիշել կատարված իրադարձությունները, դժվարանալ արտահայտվել, լինել անվճռական կամ դրսևորել ոչ ադեկվատ էմոցիոնալ արձագանք, ինչպես օրինակ՝ ծիծաղը:	Զոհերը կարող են լինել բռնություն գործադրող անձի վերահսկողության ներքո և վախենալ, որ եթե կատարվող իրադարձությունների մասին պատմեն որևէ մեկին, ապա դա ավելի կվատթարացնի իրավիճակը: Նրանք կարող են հրաժարվել խոսելուց կամ հետագայում փորձել հետ վերցնել իրենց հայտարարությունը:

Այդ հետևանքները կարող են սխալմամբ ստիպել ոստիկանության ծառայողներին կասկածի տակ դնել զոհի հուսալիությունը կամ ունակությունը՝ հանգեցնելով անհամբերության, անհավատության կամ բողոքին բավականաչափ լուրջ չվերաբերվելուն: Անչափ կարևոր է ճանաչել տրավմայի այդ նշանները և զոհի նկատմամբ ցուցաբերել բացառիկ համբերատարություն և զգայունություն:

Կարևոր. Ոստիկանությունը պետք է հետաքննությունը շարունակի նույնիսկ զոհի հայտարարության բացակայության կամ զոհի կողմից ցուցմունքը հետ վերցնելու դեպքում, ինչպես նաև արձանագրի հետագայում օգնության խնդրանք ստանալու դեպքում անհրաժեշտ մանրամասները:

Հետևանքները երեխաների վրա

Հիշեք, որ երեխաները չափազանց խոցելի են ընտանեկան բռնության դեպքերում: Այն, ինչին նրանք ականատես են եղել, կարող է իր ազդեցությունը թողնել նրանց ամբողջ կյանքի վրա: Հավանականությունն ավելի մեծ է, որ այն երեխաները, որոնք ընտանեկան բռնության ականատես են դառնում և ընտանեկան բռնություն են վերապրում, չափահաս տարիքում դառնան ընտանեկան բռնության զոհ կամ բռնություն գործադրող անձ (Օ. Հարրիսոն, 2021թ.): Չափազանց կարևոր է նրանց կարիքներին վերաբերվել զգուշորեն և հոգատարությամբ՝

- **հուսադրեք նրանց.** ասացեք երեխաներին, որ նրանք ոչ մի վատ բան չեն արել և վտանգի մեջ չեն:
- **հարգեք նրանց լռությունը.** եթե երեխաները չեն ցանկանում խոսել, ապա մի ստիպեք նրանց: Զգուշավորություն ցուցաբերեք և երեխաների հետ մի խոսեք այնպես, որ ազդեք նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու վրա, կամ նրանց արագ պատասխանի ժամանակ լրացուցիչ տրավմաների պատճառ մի դարձեք:

- **գտեք նրանց.** երեխաները հաճախ բռնության դեպքերի ժամանակ իրենց ննջասենյակներում կամ մեկ այլ սենյակում են գտնվում: Հազվադեպ է պատահում, որ երեխաները քնած լինեն, նույնիսկ եթե այդպես է թվում իրենց ծնողներին: Փնտրեք նրանց, բայց եթե նրանք իրապես քնած են, ապա մի խանգարեք նրանց, եթե դա անհրաժեշտ չէ: Հիշեք, որ նրանք նույնպես կարող էին բռնության կամ բռնարարքի ենթարկված լինել, որի առնչությամբ պետք է հետաքննություն իրականացնել,
- **հասկացեք, թե ում հետ են նրանք կապված.** ամենայն հավանականությամբ նրանք հավասարապես կապված են ծնողների հետ,
- **երաշխավորեք նրանց անվտանգությունը.** բռնություն գործադրող անձինք կարող են երեխաներին օգտագործել որպես մոր վրա ազդեցություն գործադրելու լծակ: Երեխաներին կարող է վնաս հասցվել և ծայրահեղ դեպքերում դա կարող է հանգեցնել նրան, որ բռնություն գործադրող անձը սպանի երեխաներին,
- **ոստիկանության հաշվետվություններում կատարեք համապատասխան գրառումներ.** կարևոր է, որ ոստիկանության ծառայողն իր հաշվետվություններում նշի, որ ընտանեկան բռնությունը տեղի է ունեցել երեխաների ներկայությամբ և նկարագրի երեխաների հուզական վիճակը (օրինակ՝ արդյոք նրանք վախեցել են, լաց են եղել, տրավմայի են ենթարկվել կամ չեն կարողացել խոսել), ինչպես նաև փաստաթղթավորի ցանկացած ֆիզիկական վնասվածք: Այդ փաստաթղթավորումը չափազանց կարևոր է՝ երեխաների վրա միջադեպի ամբողջական ազդեցությունը հասկանալու համար:
- **հարցազրույցները.** երեխաների հետ հարցազրույց անցկացնող ոստիկանության ծառայողները պետք է նախկինում անցած լինեն վերապատրաստում և ցանկալի է, որ նրանց ուղեկցի հոգեբանը/սոցիալական աշխատողը:

Ոստիկանության արձագանքը

Ոստիկանության կարևոր ռազմավարությունները

- Առաջնահերթություն տվեք զոհի և նրա երեխաների անվտանգությանն ու բարեկեցությանը,
- մի դատեք զոհին. կենտրոնացեք պաշտպանություն տրամադրելու և գործի հանգամանքները փաստաթղթավորելու վրա,
- ուշադրություն մի դարձրեք զոհի բնավորությանը, արտաքին տեսքին կամ կենցաղային պայմաններին, կենտրոնացեք բռնությունը դադարեցնելու և անվտանգությունն ապահովելու վրա,
- միշտ տրամադրեք անհապաղ պաշտպանություն և վստահեք տուժողի պատմածին՝ դատարանին թողնելով հուսալիության գնահատումը,
- միշտ ցուցաբերեք ապրումակցում զոհի նկատմամբ,
- բռնություն գործադրող անձի հետ հարաբերվելիս պահպանեք խիստ և հստակ դիրքորոշում: Որդեգրեք զոհակենտրոն մոտեցում՝ ապահովելով, որ ոստիկանության կողմից ձեռնարկվող գործողություններով հնարավորինս հարգվեն զոհի ցանկությունները՝ միաժամանակ առաջնահերթություն տալով նրա անվտանգությանը:

Ոստիկանության ծառայողը ոչ մի դեպքում չպետք է՝

- փորձի թերագնահատել իրավիճակը,
- փորձի հաշտեցնել զուգընկերներին,
- օգտագործի երեխաների՝ հոր հետ հարաբերությունները՝ զոհի վրա ազդելու համար,
- անտեսի գործի կարևորությունը,
- անտեսի գործի փաստաթղթավորումը:

Այդ գործողությունները **խստիվ արգելված են,** և դրանցից պետք է խուսափել՝ զոհի անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար:

Ոստիկանության ծառայողների համար քայլ առ քայլ ուղեցույց

Հետևյալ ստուգացանկը նախատեսված է ընտանեկան բռնության դեպքերին արդյունավետորեն արձագանքելու հարցում ոստիկանության ծառայողներին ուղղորդելու համար՝ ապահովելով մանրամասն հետաքննության իրականացում, զոհերի պաշտպանություն և բռնություն գործադրող անձին պատասխանատվության ենթարկում:

Արձագանքող խումբ ուղարկելը

Ոստիկանության թեժ գծին (102) զանգ ստանալիս արձագանող խումբ ուղարկեք բռնության գործադրման վայր և զոհին ոստիկանություն մի կանչեք՝ նրա անվտանգությունն ու անհապաղ աջակցությունն ապահովելու համար:

Փորձեք ձեռք բերել ու արձանագրել հետևյալ տեղեկությունները՝ դեպքի վայր ժամանող ոստիկանության ծառայողների համար՝

(i) դեպքի բնույթը,

(ii) դեպքի վայրի հասցեն,

(iii) հեռախոսահամարը, որով կարելի է կապ հաստատել զանգահարողի հետ,

(iv) որևէ զենք կիրառված լինելու հանգամանքը,

(v) անհապաղ բժշկական օգնության կամ շտապօգնության անհրաժեշտության հանգամանքը,

(vi) կասկածյալի՝ դեպքի վայրում գտնվելու հանգամանքը, իսկ դեպքի վայրում չգտնվելու պարագայում՝ փախուստի վայրը և փախուստի դիմելու եղանակը (օրինակ՝ մեքենայով, ոտքով),

(vii) զոհի՝ դեպքի վայրում գտնվելու հանգամանքը, իսկ դեպքի վայրում չգտնվելու պարագայում՝ նրա գտնվելու վայրը և անվտանգ լինելու հանգամանքը,

(viii) դեպքի վայրում երեխաներ լինելու հանգամանքը:

- Եթե զանգահարողը զոհն է, ապա տեղեկացրեք նրան, որ օգնությունն արդեն ճանապարհին է և փորձեք նրան հնարավորինս երկար պահել հեռախոսագծի վրա, և ընթացիկ տեղեկություններ հաղորդեք դեպքի վայր ժամանող ծառայողներին,
- մինչ դեպքի վայր ժամանող ծառայողները ճանապարհին են, ստուգեք, թե արդյոք պատասխանողը/հրավախախտն ունի ընտանեկան բռնության առնչությամբ կայացված որևէ որոշում չկատարելու պատմություն կամ այլ դատվածություն: Ստուգեք՝ կա՞ արդյոք ընտանեկան բռնության վերաբերյալ նախկինում արված որևէ հայտարարություն: Այդ տեղեկությունները հաղորդեք դեպքի վայր ժամանող ոստիկանության ծառայողներին,
- պարզեք բռնարարի մոտ զենքի առկայության հանգամանքը՝ նախքան ժամանելը ռիսկերը վերհանելու համար:

Դեպքի վայր ժամանելիս նախնական արձագանքը

Դեպքի վայր ժամանող ծառայողները (ցանկալի է երկու ծառայող, իդեալական դեպքում՝ մեկ իգական և մեկ արական սեռի ներկայացուցիչ) պետք է դեպքը դիտարկեն որպես բարձր ռիսկի խմբին դասակարգվող դեպք: Նրանք պետք է դեպքի վայր մեկնելիս հնարավորինս շատ տեղեկություններ ձեռք բերեն դիսպետչերից:

- Խնդրեք դիսպետչերին տրամադրել վերը նշված տեղեկությունները,
- պարզաբանեք անհետաձգելի կանչի պատճառը՝
    - ի՞նչ է կատարվել
    - ո՞վ է ներգրավված
    - որտե՞ղ է կատարվել դեպքը
    - կա՞ն կոնտակտային տվյալներ
    - կա՞ն որևէ հատուկ ռիսկի գործոններ
    - որտե՞ղ է բռնություն գործադրող անձը: Արդյո՞ք նա ունի հրազեն կամ հրազենին հասանելիություն: Արդյո՞ք նա որևէ այլ հայտնի վտանգ է ներկայացնում
    - կա՞ն վկաներ: Ովքե՞ր և որտե՞ղ են նրանք
    - ով ինչի համար է պատասխանատու դեպքի վայրում
    - հասցվե՞լ է որևէ վնասվածք: Որքա՞ն ծանր է այն: Որևէ մեկն ունի՞ շտապօգնության կարիք
    - ո՞րն է պատմությունը: Կա՞ն պաշտպանական որոշումներ (այսինքն՝ ոստիկանության կողմից կայացված անհետաձգելի պաշտպանական որոշումներ կամ դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումներ):

Ժամանելուց անմիջապես հետո

Միշտ առաջնահերթություն տվեք զոհի անվտանգությանը: Ընդունեք, որ բռնություն գործադրող անձը կարող է լինել բռնի, զայրացած և վտանգավոր: Միշտ պետք է հաշվի առնել հրազենի կամ այլ զենքի առկայությունը:

- խուսափեք բռնություն գործադրող անձին նախազգուշացնող կամ ահազանգող այնպիսի միջոցներ կիրառելուց, ինչպիսիք են ազդանշանները և լույսերը, եթե դրանք օրենքով կամ այլ կերպ անհրաժեշտ չեն,
- առանձնացրեք զոհին և բռնություն գործադրող անձին՝ անհապաղ անվտանգությունն ապահովելու համար,
- գնահատեք, թե արդյոք կան վնասվածքներ, որոնք պահանջում են բժշկական օգնություն, կամ որոնց դեպքում անհրաժեշտ է կանչել շտապօգնություն,
- որոշեք, թե արդյոք դեպքի վայրում կան երեխաներ և համոզվեք, որ նրանք ապահով են,
- իրականացրեք դեպքի վայրի նախնական գնահատում՝ հետագա հետաքննության համար տեղեկություններ հավաքագրելու նպատակով,
- բացատրեք ոստիկանության ծառայողների ներկայության նպատակը և հետաքննություն իրականացնելու պարտականությունը՝ անվտանգության նկատառումներից ելնելով առանց զանգահարողի ինքնությունը բացահայտելու:

Ապացույցներ հավաքագրելը

- Իրականացրեք դեպքի վայրի մանրամասն զննություն՝ ընտանեկան բռնության տեսանելի նշանները բացահայտելու և հնարավոր ապացույցներ հավաքագրելու համար.
- փաստաթղթավորեք կամ լուսանկարահանեք ցանկացած կարևոր ապացույց, ինչպիսիք են վնասվածքները, վնասված գույքը կամ բռնության մյուս նշանները.
- նախաձեռնեք հետաքննության գործընթացը՝ հարցազրույցներն անցկացնելով առանց մեղադրական «ինչո՞ւ» հարցն ուղղելու կամ զոհին մեղադրելու: Մի հարցաքննեք

բռնություն գործադրող անձին կամ զոհին միմյանց ներկայությամբ:

Բռնություն գործադրող անձին նույնականացնելը

Շատ դեպքերում բռնություն գործադրող անձինք կարող են հակադարձ մեղադրանքներ հնչեցնել զոհերի դեմ: Ոստիկանության ծառայողի պարտականությունն է ճշգրիտ նույնականացնել բռնություն գործադրող անձին և ապահովել զոհի անվտանգությունը՝ դադարեցնելով շարունակական բռնությունները և կանխելով հետագա բռնությունը: Բռնություն գործադրող անձի մարմնի վրա ֆիզիկական նշանները, ինչպիսիք են քերծվածքները կամ մյուս վնասվածքներն ինքնաբերաբար ցույց չեն տալիս, որ կինն է բռնություն գործադրող անձը. այդ նշանները կարող են հասցված լինել ինքնապաշտպանության նպատակներով: Ուժի կիրառման դինամիկան հասկանալը, ինչպես նաև վերահսկող ու վերահսկվող անձին պարզելը և ռիսկերի գնահատման արդյունքում ստացված տեղեկությունները վերլուծելը չափազանց կարևոր է: Ոստիկանության ծառայողները կարող են հաշվի առնել հետևյալ գործոնները՝ բռնություն գործադրող անձին և զոհին որոշելու համար՝

- յուրաքանչյուր կողմի ստացած վնասվածքների ծանրությունը,
- ուժի կիրառումը և ահաբեկումը,
- յուրաքանչյուր կողմի՝ նախկինում ընտանեկան բռնություն գործադրելու պատմությունը,
- ցանկացած կողմի՝ ապագայում վնաս հասցնելու հավանականությունը,
- ով է վախ ներշնչում մյուսին:

Հիշեք. բռնություն գործադրող անձն ունի իրավունքներ, և դրանք պետք է նրան բացատրել՝ նախքան ցանկացած ձերբակալումը:

Զոհակենտրոն մոտեցում որդեգրելը

Ոստիկանության ծառայողը չպետք է՝

- արդարացնի ընտանեկան բռնությունը,
- մեղադրի զոհին՝ բռնություն գործադրող անձին սադրելու համար,
- մեղադրի զոհին՝ պասիվ զոհ լինելու համար կամ մեղադրի նրան, որ չի հեռացել բռնություն գործադրող անձից,
- մեղադրի զոհին՝ ընտանիքը կազմաքանդելու կամ խարխլելու համար,
- սպառնա երեխաներին զոհի խնամքից վերցնելու փաստով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է երեխայի բարեկեցության համար:

Փոխարենը ոստիկանության ծառայողը պետք է՝

- վերաբերվի զոհին կարեկցանքով՝ խոսելով հանգիստ, բաց և համբերատարությամբ՝ վստահություն ստեղծելու համար,
- շեշտադրի զոհի անվտանգությունը՝ որպես հիմնական առաջնահերթություն և ապահովի դեպքի վայրում գտնվող ցանկացած երեխայի բարեկեցությունը,

- որոշի, թե արդյոք զոհը ցանկանում է լքել տունը և օգնի նրան ցանկացած երեխայի հետ միասին՝ գտնելու անվտանգ կացարաններ, ինչպիսիք են ապաստարանները, կամ կապ հաստատելու ընկերների/ընտանիքի հետ՝ աջակցություն ստանալու համար,
- համոզվի, որ ընդունման ձևաթուղթը մանրակրկիտ լրացված է մանրամասն տեղեկություններով՝ նշելով այն որպես ընտանեկան բռնության դեպք՝ այլ միջադեպերից այն տարբերակելու համար: Նույնականացնի զոհի և բռնություն գործադրող անձի սեռը, նրանց տարիքը և նրանց միջև փոխհարաբերությունները,
- խուսափի այն որպես ընտանեկան կոնֆլիկտ պիտակավորելուց, քանի որ դրանում հաշվի չի առնվում ընտանեկան բռնության դինամիկան:

Ռիսկերի գնահատում իրականացնելը

- Իրականացնել ռիսկերի պարտադիր գնահատում՝ ընդունման ձևաթղթի և հետաքննության վերաբերյալ հաշվետվության համար համապարփակ տեղեկություններ հավաքագրելու համար,
- փաստաթղթավորել իրավախախտի ցանկացած վարքագիծ, հայտարարություն կամ ոչ բանավոր ազդանշան, որոնք վկայում են զոհի կամ իրավապահ մարմինների համար վտանգի բարձր մակարդակի մասին,
- սահմանել վախի և վերահսկողության դինամիկան՝ հիմնական ագրեսորին նույնականացնելու համար:

Ռիսկերի գնահատումը կարևոր գործիք է, որը կիրառվում է զոհի կյանքին սպառնացող պոտենցիալ վտանգը և հետագա բռնության վտանգը գնահատելու համար: Ոստիկանության ծառայողները պետք է օգտագործեն ռիսկերի գնահատման ձևաթուղթը: Ռիսկը գնահատելիս կարևոր է հաշվի առնել զոհերի կողմից ռիսկի ընկալումը և ցանկացած երեխայի համար ռիսկի առկայությունը: Ոստիկանության ծառայողները պետք է զոհին բացատրեն, որ այդ հարցերը տրվում են՝ նրա անվտանգությունը գնահատելու համար: Հարցերը պետք է տալ հանգիստ, դանդաղ տեմպով, հաշվի առնելով, որ ծայրահեղ շոկի մեջ գտնվող զոհերը կարող են դժվարություններ ունենալ կենտրոնանալու կամ իրավիճակը գիտակցելու հարցում:

Եթե ռիսկերի գնահատման հարցերի կեսի կամ կեսից ավելիի պատասխանը «ԱՅՈ» է, ապա համարվում է, որ զոհը գտնվում է բարձր ռիսկային խմբում: Այնուամենայնիվ, եթե հետևյալ հարցերից որևէ մեկի պատասխանը «ԱՅՈ» է՝ անկախ այլ պատասխաններից, նա ինքնաբերաբար դասակարգվում է բարձր ռիսկայնության խմբի մեջ գտնվող՝

1. **Արդյո՞ք բռնարարը սպառնացել է վնասել կամ սպանել զոհին**
2. **Արդյո՞ք բռնարարը սպառնացել է զոհին կամ նրա դեմ կիրառել է զենք, դանակ կամ այլ առարկա**
3. **Արդյո՞ք բռնարարը խեղդել է կամ փորձել է շնչահեղձ անել զոհին:**

Նման դեպքերում ոստիկանության ծառայողը պետք է հստակ բացատրի զոհին, որ նրա կյանքին լուրջ վտանգ է սպառնում: Ցանկալի է, որ նա իր երեխաների հետ ապաստան փնտրի ապաստարանում կամ հարազատի տանը, որտեղ բռնարարը չի կարող գտնել նրան:

Ոստիկանության ընդունման ձևաթղթում պետք է մանրամասնորեն փաստաթղթավորվեն ռիսկերի գնահատման արդյունքները՝

նշելով, թե արդյոք ռիսկի մակարդակը **բարձր է, միջին կամ ցածր**, ինչպես նաև փաստաթղթավորվեն զոհի կողմից ներկայացված առաջարկությունները և նրա կայացրած որոշումները:

Ռիսկերի նախնական գնահատմանն այնուհետև հաջորդում է ընտանեկան բռնության զոհերի աջակցման կենտրոնում ռիսկերի համապարփակ գնահատումը, եթե զոհը որոշում է դիմել հետագա օգնության, այդ թվում՝ ապաստարան, իրավաբանական օգնություն կամ խորհրդատվական ծառայություններ ստանալու համար:

Ընտանեկան բռնության մասին օրենքի շրջանակներում ոստիկանության հնարավոր գործողությունները

Անմիջապես դեպքի վայրում հանձնեք և բացատրեք ցանկացած պաշտպանական հրաման:

Նախազգուշացումը

- Ոստիկանությունը նախազգուշացումը կիրառում է միայն այն դեպքում, երբ բռնության դեպքը տեղի է ունեցել **առաջին անգամ**, **առկա չէ** բռնության կրկնման **անմիջականորեն սպառնացող վտանգ**, և **անհետաձգելի միջամտության հիմքերն** առկա չեն,
- ոստիկանության ծառայողի կողմից նախազգուշացում կիրառելու մասին որոշումն առձեռն հանձնվում է բռնություն գործադրող անձին՝ ստորագրությամբ: Նախազգուշացումն ուժի մեջ է մտնում անձի կողմից դրա մասին տեղեկանալուց անմիջապես հետո,
- դեպքի վայրում նրա բացակայության դեպքում նախազգուշացման մասին որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում նախազգուշացման մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է փոստի կամ պատվիրված փոստի միջոցով: Այդ պահից բռնություն գործադրելու համար պատասխանատու անձը համարվում է ծանուցված՝ անկախ հաղորդակցության՝ պաշտոնապես ստացած լինելու հանգամանքից: («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ըն-

տանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 6-րդ հոդված):

Անհետաձգելի միջամտության որոշումը (ԱՄՈ)

- Որևէ մեկի պաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողը կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում, եթե ընտանիքի մեկ անդամը, զուգընկերը, ընտանիքի նախկին անդամը կամ նախկին զուգընկերը մյուսի նկատմամբ **բռնություն են կիրառել, և առկա է բռնության կրկնման լուրջ վտանգ: Սա հատկապես կարևոր է, երբ նախազգուշացում ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում անձը կրկին կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ,**
- որոշումն ուժի մեջ է մտնում դրա կայացման պահից,
- ոստիկանության ծառայողի կողմից որոշման պատճենը դեպքի վայրում առձեռն հանձնվում է բռնություն գործադրող անձին՝ ստորագրությամբ: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է փոստի կամ պատվիրված փոստի միջոցով: Այդ պահից բռնություն գործադրելու համար պատասխանատու անձը համարվում է ծանուցված՝ անկախ հաղորդակցության՝ պաշտոնապես ստացած լինելու հանգամանքից,
- ոստիկանության ծառայողը որոշման պատճենն անհապաղ ներկայացնում է իր ստորաբաժանման ղեկավարին և տեղական աջակցման կենտրոնին,
- եթե առկա է ֆիզիկական վնաս հասցնելու անմիջական վտանգ, կամ բռնություն գործադրող անձը խախտել է գործող միջամտության որոշումը, նա կարող է արգելանքի տակ վերցվել՝ զոհի անվտանգության նկատառումներից ելնելով:

Սա կարող է ընդգրկել այնպիսի իրավիճակներ, երբ ոստիկանության ծառայողը որոշում է, որ բռնություն գործադրող անձն անմիջական և լուրջ սպառնալիք է ներկայացնում զոհի կամ ընտանիքի մյուս անդամների անվտանգության համար,

- ոստիկանության ծառայողը չի հեռանում զոհի տնից մինչև բռնություն գործադրած անձի կողմից իր իրերը հավաքելն ու հեռանալը,
- բռնություն գործադրած անձին արգելվում է ոստիկանության ծառայողի կողմից որոշված հեռավորությունից ավելի մոտենալ զոհին և վերջինիս խնամքի տակ գտնվող որևէ մեկից, կապ հաստատել զոհի հետ և 20-25 օրից շուտ վերադառնալ տուն: Նա կարող է վերադառնալ միայն մեկ անգամ իր անձնական իրերն այդ վայրից վերցնելու համար՝ ոստիկանության ծառայողի ուղեկցությամբ,
- եթե բռնություն գործադրող անձի տիրապետման տակ կա զենք, ապա նա պետք է այն անհապաղ հանձնի ոստիկանության ծառայողին,
- եթե զոհն անչափահաս է կամ անգործունակ անձ է, ապա ոստիկանության ծառայողն այդ որոշման պատճենն ուղարկում է խնամակալության և հոգաբարձության մարմին՝ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու համար,
- եթե զոհը գտնվում է լուրջ վտանգի մեջ և ապաստարանի կարիք ունի, ապա ոստիկանության ծառայողը կօգնի նրան հավաքել առաջին անհրաժեշտության իրերը և 099 887 808 հեռախոսահամարով կապ հաստատել ընտանեկան բռնության զոհերի աջակցման կենտրոնի հետ՝ զոհի և նրա խնամքի տակ գտնվող անձանց ապաստարան տեղափոխվելը կազմակերպելու համար («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին օրենք», 7-րդ հոդված),

- ինքնապաշտպանության դեպքում բռնարարի մարմնի վրա կարող են լինել տեսանելի վնասվածքներ, ինչպես օրինակ՝ քերծվածքներ, և նա կարող է պնդել, որ ինքն է զոհը: Նման իրավիճակներում ծառայողը պետք է պարզի, թե ով է հիմնական ագրեսորը, ով է ում վախ ներշնչում, և խուսափի երկու կողմերի նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշում արձակելուց:

Անհետաձգելի միջամտության որոշումների ինֆոգրաֆիկ և սխեմատիկ ներկայացումը

Լրացուցիչ նկատառումներ

Կարևոր գործոններ, որոնք պետք է հաշվի առնել

- **Բռնության տարածվածությունը.** ոստիկանություն կատարված առաջին զանգին հաճախ նախորդում են հարձակման կամ բռնության կրկնվող դեպքեր: Ընտանեկան բռնությունը, որպես կանոն, ժամանակի ընթացքում սրվում է,
- **բռնության ձևերը.** բռնությունը ներառում է ոչ միայն ֆիզիկական բռնությունը, այլև դրա սեռական, հոգեբանական և տնտեսական ձևերը, որոնք մեծ վնաս են հասցնում թե՛ զոհին, թե՛ երեխաներին և ունեն ավելի լայնատարած հասարակական հետևանքներ,
- **բռնության թվային հարթությունները.** դրանք հաճախ զուգորդվում են բռնության այլ ձևերի հետ և պետք է դիտարկվեն որպես ընդհանուր վարքագծի մաս: Դրանք կարող են ներառել հետամտումը զոհի հեռախոսի լրտեսող ծրագրերի միջոցով, որով մշտադիտարկվում է զոհի կողմից սոցիալական ցանցերի օգտագործումը կամ սահմանափակվում է նրա կողմից իր սարքերի կամ սոցիալական ցանցերի հասանելիությունը: Այս առնչությամբ զոհը կարող է ունենալ անվտանգության հետ կապված հատուկ խորհրդատվության կարիք,
- **հաղորդում չներկայացնելը.** զոհերը հաճախ տատանվում են բռնության մասին հաղորդում ներկայացնելու հարցում և կարող են դա անել միայն ծայրահեղ վախի դեպքերում,
- **ինքնապաշտպանության դինամիկան.** որոշ դեպքերում զոհերը կարող են դիմել ինքնապաշտպանության

կամ պատասխան բռնության՝ ուժեղ սպառնալիքների կամ վախի պատճառով,

- **բռնության բնույթը.** ընտանեկան բռնությունը «ընտանեկան կոնֆլիկտ» չէ, այլ բռնություն գործադրողի, սովորաբար տղամարդու կողմից բռնացող վարքագծի օրինակ է, ով ձգտում է ուժ և վերահսկողություն հաստատել իր զուգընկերոջ կամ կնոջ նկատմամբ,
- **զոհին մեղադրելը և մանիպուլյացիայի ենթարկելը.** զոհերը կարող են արդարացնել բռնություն գործադրող անձի գործողությունները՝ մեղադրելով իրենք իրենց կամ նվազեցնելով բռնության լրջությունը: Բռնություն գործադրող անձինք կարող են «մեղրամսի ժամանակահատվածում» ներողություն խնդրել և խոստանալ փոխվել՝ մանիպուլացնելով զոհին, որպեսզի նա չհեռանա, սակայն բռնությունը սովորաբար շարունակվում և սրվում է,
- **ոստիկանության արձագանքը.** չափազանց կարևոր է, որպեսզի ոստիկանության ծառայողները դիմակայեն բռնարարի կողմից կարեկցանք առաջացնելու ցանկացած փորձի և շարունակաբար առաջնահերթություն տան զոհի պաշտպանությանը՝ գիտակցելով բռնության երկարաժամկետ ազդեցությունը նրանց կյանքի վրա:

Ինչ անել, երբ զոհը հերքում է բռնության փաստը

Որոշ զոհեր կարող են բռնություն գործադրողի նկատմամբ վախի պատճառով կամ որպես իրավիճակը կարգավորելու միջոց հերքել կամ արդարացնել բռնությունը: Նրանք կարող են մեղքը բարդել ուրիշների, ինչպես օրինակ՝ սկեսուրների վրա, կամ նսեմացնել միջադեպերի կարևորությունը՝ դրանք ներկայացնելով սոսկ որպես փաստարկներ, արդարացումներ գտնելով բռնարարի համար՝ ի նկատի ունենալով նրա հարբած կամ վրդովված լինելը: Այդ պատասխաններից ոչ մեկն ընդունելի չէ:

Ոստիկանության ծառայողները դեպքը փաստաթղթավորելիս պետք է իրականացնեն մանրամասն հարցաքննություն՝ բռնության առկայությունը պարզելու, ռիսկերի գնահատում կատարելու, դեպքի վայրում գտնվող երեխաներին հարցաքննելու և զոհին պաշտպանելու նպատակով միջոցներ ձեռնարկելու համար: Նույնիսկ եթե զոհը ցուցմունք չի տալիս կամ հետագայում հետ է վերցնում այն, ապա հետաքննությունը պետք է շարունակվի, և բոլոր մանրամասները պետք է մանրակրկիտ արձանագրվեն՝ հետագայում օգնության դիմում ստանալու դեպքերի համար:

Ընտանեկան բռնության զոհերի աջակցման կենտրոնները

Աջակցման կենտրոնները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից (Լիազոր մարմին) լիազորված հասարակական կազմակերպություններ են, որոնք առաջարկում են սոցիալական ծառայություններ, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն: Ոստիկանության ծառայողները պետք է զոհերին ուղղորդեն միայն Լիազոր մարմնի կողմից լիազորված կենտրոններ, որտեղ անձնակազմն անցել է հատուկ վերապատրաստում՝ ընտանեկան բռնության զոհերին աջակցություն ցուցաբերելու համար (տե՛ս ստորև ներկայացված ցանկը): Այդ կենտրոնների սոցիալական աշխատողները պատասխանատու են օգնություն հայցող շահառուների շրջանում ընտանեկան բռնության դեպքերի մշտադիտարկումն իրականացնելու համար, ապահովելով մշտական աջակցություն՝ բռնության ենթարկված անձանց հետ հանդիպումների, զանգերի և հաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով («Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք, 11-րդ հոդված, 1.1 ենթակետ):

ՇՐՋԱՆ	ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ
ԵՐԵՎԱՆ	«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ	099 887 808 (կենտրոն և ապաստարաններ)
ՏԱՎՈՒՇ	«Հանուն մարդու իրավունքների և իրավահավասարության» ՀԿ	094 788 770
ԱՐԱՐԱՏ	«Դու մենակ չես» ՀԿ	077 802 700
ԱՐՄԱՎԻՐ	«Երիտասարդ Ավանգարդ» ՀԿ	093 574 657
ՍՅՈՒՆԻՔ	«Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ	098 848 453
ԱՐԱԳԱԾՈՏՆ	«Թալին-հույս» ՀԿ	091 482 035
ՎԱՅՈՑ ՁՈՐ	«Դու մենակ չես» ՀԿ	098 886 077
ԼՈՌԻ	«Ընտանիքն առանց բռնության» ՀԿ	098 092 094

ԿՈՏԱՅՔ	«Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ	077 380 053
ՇԻՐԱԿ	«Կանանց իրավունքների տուն» ՀԿ	077 570 870
ԳԱՂԱՐՔՈՒՆԻՔ	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ	094 876 502 (Մարտունի) 094 876 505 (Գավառ)

Հղումներ

Եվրոպայի խորհուրդ (2011թ.): Ստամբուլի կոնվենցիա. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա: Աղբյուրը՝ https://www.coe.int/en/web/istanbul-convention:

ԳՐԵՎԻՈ (2021 թ.), Կանանց նկատմամբ բռնության թվային հարթակի մասին թիվ 1 առաջարկություն: Աղբյուրը՝ https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147:

Հարրիսոն Օ., (2021թ.): «Ընտանեկան բռնության երկարաժամկետ ազդեցությունը երեխաների վրա», 41, ԵՐԵԽԱՆԵՐ: ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: Ամսագիր 63 (2021թ.): Աղբյուրը՝ https://lawecommons.luc.edu/clrj/vol41/iss1/7:

Կանանց աջակցման կենտրոն (2018թ.): Ոստիկանության արձագանքը կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը. Գործնական ձեռնարկ Հայաստանի ոստիկանության համար: Աղբյուրը՝ https://womensupportcenter.org/assets/PDF%20publications/EUR%20ENG%20FINAL.pdf:

Հայաստան (2017թ.): «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենք. Աղբյուրը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194267:

Հայաստան (2003թ.): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: *Աղբյուրը՝* https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194397:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE